


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 „
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Նիկոլ թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 „
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 „
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՐ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չեմ տրուիր

Ծանոջման տղր
20 ամսիկով

ԼՈՅՍ ՏԵՍԱՐ

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ի

Ա. հատորը. իսկ Բ. հատորին՝ որ առաջինին գրեթէ կրկին մեծորիշեր կունենայ, մեծ մասը տպագրուած է:

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԸ 2 ՖՐԱՆՔ

Բ. հատորին յրանաչէն վերջ գինը պիտի աւելցնենք. թայց որոնք որ կանոնա եւ ածան ստանալ կոչուեն, այժմէն 2 ֆրանք մեզ դրկելոն են, Վստան ըլլալով թէ Առաջին հատորը անմիջապէս կստանան եւ իւն ալ ոչ այնքան ուշ:
10 օրինակի դրամ դրկողը 11 օրինակ կստանայ:

ՕՐՄԱՆԵԱՆԻ ԴԵՊՔԸ

Իսահակ Ժամայրեանի սպանուածին քիչ յետոյ, Պատրիարք Օրմանեանի վրայ կատարուած սպանման փորձը մտքերը կրկին յուզեց: Առաջինը գրեթէ առանց բացատրութեան ժողովուրդին նողկանք պատճառած էր, քանի որ բաւական բացորոշ յայտնուեցաւ թէ՛ անով հայրենասիրութեան անունին տակ գործող ծանօթ խմբակի մը գաղափարակիր մէկ որոշումը գործադրուած էր. իսկ երկրորդը, յանձին Օրմանեանի, խորհրդածելու գուռ մը բացաւ. շատ մը հայ շրջանակներ իրարու տարակարծիք են այս գէպի մասին:

Գաղով մեզ, մենք հոս չպիտի պըրպըտենք թէ Օրմանեանը սպաննել փորձողը անհասկանալի վրէժնալիրութեամբ թէ յեղափոխական մարմնի մը հրահանգով այդ քայլը առաւ. այլ Օրմանեան մը պատրիարք չունենալու համար ու եւ հայու մը կողմէ ընտրուած այդ միջոցին արդար կամ դատապարտելի լինելը կուզենք հոս խնդիր ընել, առ այժմ միայն երկու տողով:

Մեզմէ շատերը խորապէս համոզուած են թէ՛ Օրմանեանը չափազանց թոյլ արարեալ մը եղած է. նա իր օրով թոյլ առած է որ Ազգային Սահմանադրութիւնը գործադրութենէ դադրի, Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան համար դարեւ ի վեր ազգին վայելած առանձնաշնորհումները ոտքի տակ առնուին եւ դեռ շատ մը իրաւունքներ Սուլթանին ու Դրան քահանայից զոհուին. նաեւ չմոռնանք յիշել Լա Հէյի խաղաղութեան դեպքանախորհրդին Օրմանեանի առած ծանօթ հեռագիրը որով, արտասահմանի հայ գաղթականութեանց զրկած պատուիրակին յանուն հայ ազգին խօսելու:

պաշտօնը չէզոքացուց. եւ այս բոլորը զոհողութիւններուն փոխարէն ու եւ բարեք կամ մեղմացում ձեռք բերել առանց յաջողելու: Օրմանեան իր այս անյաջողութեանց մէջ պարտաւոր էր հրաժարել, ինչպէս կը հրաժարէր վարչականներ ու նախարարներ երբ իրենց ծրագիրը գործադրութիւնը անկարելիութեան կամ անյաջողութեան կը մատնուի: Կաղմակերպակ մարմիններ եւ պաշտօնական ու անպաշտօն անհատներ յիշեցուցին Պատրիարքին իր այս պարտքը, թէ անգառնալի կերպով հրաժարելու է. սպառնալիքներ ալ եղան իրեն յեղափ. կուսակցութեանց կողմէ. բայց նա գէթ հրաժարելու քաջութիւնը չունեցաւ, կամ չուզեց հրաժարել, անսարկոյ պաշտականներու խաղաղակի խոստովանելուն՝ որոնք երբեք չը գործադրուեցան: Այլ եւս այս պարտքներուն տակ Օրմանեան իր Պատրիարք ազգին իրաւունքներուն պաշտպանը ըլլալէ զադրած էր. ուստի հայ ժողովուրդին կը մնար դանի ախտէն վար քաշել եւ ցոյց տալ աշխարհի թէ Օրմանեանի հետեւած քաղաքականութիւնը ազգին բաղձանքներուն ու շահերուն հակառակ է: Արդ, վերջին գէպը Պատրիարքը ախտազուրկ ընելու իր միջոց՝ չենք գտաւ պարտքը. պիտի ցաւէինք միայն ի՞նչ նա գնդակահար մեռնէր, որովհետեւ մեր մէջ բազմաթիւ չեն Օրմանեանի նման թարձր զարգացում առացած եւ կեղեցականներ: Ինք եթէ քաշուի կրկին Սրմաշու Դպրեւանքը, ազգին օգտակար կրնայ ըլլալ:

Մեր վերջին բարեկամական խորհուրդը իրեն այս թող ըլլայ:

ԳՈՐԴՔԸ

ՕՐՈՒՆԱՆ ԲԱՂԱԲԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱԶՄԵՏ ԲԵՋԱ ՊԵՅ

Ա.

Գիշ թէ շատ մեր ազատ մամուլին հրատարակութեանցը հետեւող ու եւ անհատի ծանօթ ըլլալու է երկասարկութեան համաբաւարար պարագլուխ՝ Ահմէտ Ռիզայի անունն ու արմկալից գործունէութիւնը. մեր մամուլը, զրեթէ ամբողջութեամբ բաւական մօտէն հետեւած է այս թուրք անձնաւորութեան իր ֆրանսերէն Մեշիկի կիսամեակովը եւրոպայի մէջ ունեցած գործունէութեանը, ու անոր էական դերը մեր ժողովուրդին ծանօթացուցած է. մեր կարող հրապարակաբանները, Տիգրան Երկաթ, Արփիարեան, Չեքալ, Չօպանեան անով զրադելը, անոր գործին վրայ մանրամասն ուսումնասիրութիւններ հրատարակելը անարժան չեն համարած:

Պատճառն այն է թէ, մանաւանդ 1903ին Բարեզ գումարուող նաղաղութեան արեւելքական Համաժողովին ու Ռոս Արմենիա թերթին հիմնարկութեան ի վեր, Ահմէտ Ռիզա վար առած է իր դիմակը, որով հրապարակի վրայ կերեւէր, ու եւրոպայի հանրային կարծիքին առջեւ ձեռնարկած է Հայերու ու Հայկական խնդրոյ դէմ ազդու, կորովի, մոխրային պայքար մղել, որը մեր տեսակէտով դժբախտապէս իր աննպաստ հետեւանքները ունենալէ զերծ չէ մնացած:

Աւելորդ պիտի չըլլար ուրեմն ցոյց տալ հանրութեան թէ՛ որոնք են, իրենց գլխաւոր դերերը, այս թուրք անձնաւորութեան մեղի դէմ այնքան յաջողութեամբ գործածած զէնքերն. ինչ է իր դերը, գտնուած միջավայրին մէջ, եւրոպայի քաղաքագէտներու կամ հայաստանեւոր աչքին. վերջապէս, եւրոպայի մէջ մեր գործիչները ինչպէս անոր պատասխանած են:

Ու նախ, Մեշիկի հաւաքածոն թղթատող մէկու մը համար, որ զերծ է մոլեռանդ հակամեծերէ ու նախապաշարութեան, աներկայ զոհուար պիտի ըլլար վայրկեան մը իսկ ուրախ կամ տարակոյսի ենթարկել այս թուրքին ունեցած տաղանդաւոր հրապարակազրկ իրական արժանիքը, գործունէութեան կորովի՝ որքան պաղարկւն ու յանդուգն նկարագրեր: Միւս կողմէ, չափաւանցել չէր ըլլար եթէ ըսուէր, խնդրը մեր իսկ շահուն համար նոյն անկողնակալութեամբ քննելով, թէ եւրոպայի ու մասնաւորապէս ֆրանսական ոտանքին մէջ անոր վայելած:

համբաւը, հռչակած անունը՝ «անսահման» է:

Չաւակը վիշնայի նախկին դեսպան ու հանրային կրթութեան նախկին նախարար՝ ինկիլիկ Ալի պէյի, որ իր ազատական գաղափարներուն համար Գոնեայ աքսորուեցաւ, Ահմէտ Ռիզա իր մայր ունեցած է աւստրիացի կին մը. այս եւրոպացի մօր ազդեցութեամբ, Ահմէտ Ռիզա բախտը ունեցած է կանուխէն ստանալու փայլուն կրթութիւն մը. Բարեզի մէջ, ուր զըլխաւորաբար իր ուսումնը կատարեալագործած է, Ահմէտ Ռիզա ջերմապէս կը յարի Դրական Իմաստասիրութեան ու Մարդկութեան Կրօնքին տիեզերածանօթ հիմնադրի՝ Օկիւսդ Գոնդի վարդապետութեան. վարդապետ մահէն ետք, անոր կտակակաւոր ու յաջորդ՝ Բիէն Լաֆիթի ամենէն յաւան, ամենէն խանդավառ հետեւողներէն եղած է, ու Դրական Իմաստասիրութեան քօրականներ տեսակէտով, Ֆրանսայի ժողովրդային համալսարաններուն մէջ ազդու գործունէութիւն մը ունեցած է. (տես Օկիւսդ Գոնդի. Լա Ռիշի. 1902, Մարտ). իր թերթին՝ Մեշիկի դաւաճող միջին այսօր զարգարուած է «Կարդ», «Յաւադըմութիւն» բառերով, որոնք, ինչպէս յայտնի է, «Այլախրութեան» (աղբիւր) հետ Դրական Իմաստասիրութեան հիմնական ու յաւանական նշանաւոր կը ներկայացնեն:

Կը հակացուի ուրեմն թէ, երբ 1895ին իր Մեշիկի հիմնեց, Ահմէտ Ռիզա եւրոպացիներու համար արդէն ծանօթ դէմք մըն էր. բայց մանաւանդ Մեշիկի հիմնարկութեան ու Սուլթան Համիտի դէմ իր մղած ազդու պայքարէն առիթն՝ անիկա արժանացաւ օտար անկողնակալ հրապարակաբաններու համակրանքին ու քաջալերանքին: Արքայական հրամանագիր մը, որ իրեն առջեւ պիւլիքական սահմանադրութեան մուտքը փակեց, ու Բարեզի մէջ Սուլթանի կողմէ անոր դէմ բացուած դատ մը, — որու միջոցին իրեն իր խորհրդական ունեցաւ նախկին նախարար՝ Միլլանը, ու իր վրայ՝ ժօրժ Գլէմանայի նման անձնաւորութիւն մը — Ռիզայի համբաւը հռչակող նոյնքան փայլուն առիթներ եղան:

Մնաց որ, Ահմէտ Ռիզայի անձնական անժանիքը, հայրենասիրական նկարագիրը գնահատողները միայն եւրոպացիները չեն. այլ նոյնիսկ հայ հրապարակաբաններ զայն չեն ուրացած: Տիգրան Երկաթ, իր թուրքիս կրնա՞յ ապրիլ ծանօթ ուսումնասիրութեան վերջին մասին մէջ, զօրեղապէս Ռիզայի վերացական ու անգործնական ոգին քննադատելով ու դատապարտելով հանդերձ, զայն կանուանէ իր «Երկասարկ թուրքի» համբաւը կանգուն:

— $U_j n^0$, ku ;

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Քղրի Գանախճի գեղէն Պետրոս Մուշեղեան 1895ին Ամերիկայ գացած էր, ուր քանի մը տարի աշխատելով, մաս մը դրամ կը ճարէ ու գէպի հայրենիք կը վերադառնայ. բայց կարին կը բանտարկուի, հոն իր դրամը կառնեն վրայէն և տարիէն աւելի բանտին մէջ կը հեծէ: Պետրոսի հայրը իմանալով անոր բանտարկութիւնը, կարին կերթայ. սակայն կարող չըլլար իր զաւակին երեսը իսկ տեսնել. բռնած ծախքը ու տուած կաշառքները ապարդիւն կը մնան: Բանտարկեալին մայրը ու զաւակներն ալ մինչեւ կարին կը ճարորդեն, բայց միշտ ապարդիւն:

Վերջապէս վերջերս հայրենիքէն ստացուած հաւանքներ կը հաստատեն թէ խեղճ Պետրոսը բանտին մէջ մեռած է, առանց յանցանքի ու առանց դատաւճռի:

— Վեհ. Հայրապետը տեղեկանալով որ, Զ. Իւսէրիոյ առաջնորդ Տ. Մելքիսեդէկ արքեպ. Մուրատեան իր հիւանդութեան պատճառաւ մտադիր է վաճառք մը քաջութիւն նախագիծ մը զանի հրաւիրելու որ իջմիծին գայ և ստանձնէ Ս. Հռիփսիմէ վանքի վանահայրութեան պաշտօնը:

— Զրանսայի երեսփոխանական ժողովոյ նարաշխանքը բացուած ըլլալով, ընկերվարական երեսփոխան ու Բարձր Արմենիայի խմբագրութեան աշխատ, Ս. Զրանսի Տը Բուէ-սանսէ, որուն թան ու Օտոր թերթերու մէջ հայերու ինպատու ըրած հրատարակութիւնները ընթերցողներուն ծանօթ են, որոշած է արտաքին գործերու նախարար՝

Մ. Տէլբասէն հարցապնդել հայկական խնդրոյ մասին: Հարցապնդումը մօտ առնէն տեղի կունենայ:

— Պարիլայէ մեզ կը գրեն թէ՛ 50 օրէ ի վեր Դանուբը սառած ըլլալով, գործերը բոլորովին դադարած են, ախպէս որ նաւամատոյցը աշխատող հայ պանտախտները անգործ ու աղքատ վիճակի մէջ սրճարաններու տնկիւնը կրծկտած կը մնան: Նամակագիրը կը յաւելու թէ հայ պանդուխտը իր այս խեղճ վիճակին մէջ ալ աղքին աղէտներուն անտարբեր մնալ չուզիր ու մտադրութիւն ունի Կովկասի տաճկահայ գաղթականներուն ինպատու հանգանակութիւն մը ընել ու արգիւնքը խմբագրութեանս ղրկել:

— Արամ Ղազարեան Պարսկահայ անհատ մը, որ վերջերս Եկատէրինոտարի մէջ վախճանած է, Դաւ. Էթի Հայուհեաց Բարեգործ. ծանօթ ընկերութեան կարեւոր գումար մը կտակած է, Պարսկաստանի մէջ աղքատի կրթական գործին տարածութիւնը սահմանուելու համար:

— Սիպերիոյ կողմերը աքսորուած հայերուն հոգեւոր պէտքերը մատակարարելու համար Երեմիա քհն. Ստեփանեանց ժամանակէ մը ի վեր աղք կողմերը շրջելու յետոյ, այս անգամ վերադարձած է իր քառե և տեղւոյն հայերու խոր հըրդով քաղաքային վարչութեան խնդիր մը ներկայացուցած է, որով կը խնդրուի Հայոց եկեղեցւոյ և կամ աղօթատան համար 500 քառակուսի կանգուն հող շնորհել:

— Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս՝ Տ. Սահակ Եպսկ. Խապա. եանի ընտրութիւնը հաստատող

պէրաքը Պատրիարքարան ուղարկուած ըլլալով, Ընտրելիին անուանին իբր Կիլիկիոյ կաթողիկոս յիշատակութիւնը Առանայի մէջ նախորդ շաբթու հանդիսաւորապէս տեղի ունեցած է:

— Երուսաղէմի վանքին լուսարարապետ՝ Տ. Սահակ Եպսկ. Խապաեանի Կիլիկիոյ կաթողիկոս ընտրութեան լուսարարապետութեան պաշտօնը քաց մնացած ըլլալով, մօտ օրեր նոր լուսարարապետին ընտրութեանը կը ձեռնարկուի: Տ. Եղիշէ վրդ. Զիլիկիոյ եան հաւանական ընտրելի կը նկատուի:

— Բեդրսպուրկի մէջ վախճանած է Օր. Աննա Եղեանց՝ որ 1879էն ի վեր Կարնոյ կարմիր վանքին մէջ հաստատուած որբանոցին սատարած ու 50 որբ որդեգրած էր, և տարուէ տարի 250 ոսկի կը վճարէր Որբանոցին խնամակալութեան: Հանգուցեալը Բեդրսպուրկի մէջ, նոյն որբանոցը բարելաւելու համար, Տիկնանց խնամակալութիւն մը կազմած էր: Իր գործունէութեան շնորհիւ, այսօր 500 ոսկի պատրաստ կայ, կըսեն, իր մեռնելէն վերջը երկու տարի եւս Որբանոցը կանգուն պահելու համար:

— Մանչեսթըր հաստատուած հայ վաճառական մը, որ իր անունը ուզած է ծածուկ պահել, Պոլսոյ Գալֆահան Որբանոցին 200 տնդ. ոսկի նուիրած է:

— Սուլթան Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս՝ Տ. Սահակ Եպս. Խապաեանի Ա. կարգի Մէճիտիյէ պատուանշանը տուած է:

— Տեղւոյս Որբանոցի Գործ. ժողովը պաշտօնադրով մը կը ծանուցանէ մեզ թէ, հաւաքիչը հրաժարած ըլլալով, ասկէ վերջ

բաժնեգրները պիտի հաւաքեն Տ. Տ. Յ. Ճանկուեան, Ա. Մե. Լիտոնեան ու Ս. Եղնիկեան, այդպէսով Որբանոցը իւրաքանչիւր շաբթ հաւաքիչի տուած երեք Ֆր. վարձքը պիտի շահի. հետեւաբար կըսէ որբանոցը, կարիք պիտի ըլլայ երկու նոր որբ տարելով զանոնք վճարելու չափ գումար մըն ալ ապահովել:

ՀՐԱԺԵՇՏ

Թատերախումբս այսօր կը մեկնի քաղաքէս Պուրկաղի ճամբով դէպի Ֆիլիպէ. այս առթիւ պարտք անհրաժեշտ կը համարենք մեր անկեղծ շնորհակալքը յայտնել բոլոր անոնց՝ որոնք վեհանախարար հաճեցան ձեռք կարկառել ազնիւ նպատակի մը յաջողութեան համար. մեր միմիայն իղձն ու փափաքն է հայ բեմը բարձրացնել, ընտրել այնպիսի հեղինակներու երկեր, որոնց անունը անմահ մնացած է, իբրեւ մարդկութիւնը զարգացնող մտքի մշակներ: Պիտի ճգնինք ու աշխատինք յառաջիկային աւելի փայլուն կերպովներ. կայանալու վառնայի ազնիւ թատերասէր հայ հասարակութեան, որոնց ամենուն ալ կը մնամք անհուն երախտապարտ:

Ի դիմաց «Նառէժտա» հայ
գերասանական խմբին
Վ. ՊԱՊԵԱՆ
Վառնա, 15 Յունուար 1903

- Կը մոռնա՞ք թէ Վալիի մը առջին կը գտնուիք:
- Չեմ մոռնար:
- Կը ճանչնա՞ք դիւ:
- Կը ճանչնամ:
- Ուրե՞մն:
- Չեմ կրնար պատճառն ըսել:
- Դարձեա՞լ:
- Այո՛ դարձեալ:

Վալի փաշան կեցած տեղը փոփոխուաւ ու կատաղութեան Առաքել Էֆէնտիին վրայ յարձակելով պոռաց:

Ու անոր օձիքը բռնած սկսաւ քաջաչել:

— Ի՞նչ կուզէք ինձ, կախաղեց Առաքել Էֆէնտիին՝ աղաւթելու ջանալով:

— Ըսէ՛ք թէ ինչու՞ համար խտրուած էք, թէ ինչու համար երեսին նետեցիք ձեզի տուած նուէրս եւ թէ ի՞նչու համար տատաճաւ չէք կրնար յայտնել:

— Վալի՛... Թողէ՛ք զիս... Թողէ՛ք որ դուրս ելնիմ այս սեմերէն, ուսկից արեւն կը հոտի:

— Վա՛տ, կը յանդգնիք իմ առջեւ այդպէս խօսելու, պոռաց զայրացած փաշան ու ձեռքը ելեք-տրակա՛ն կոճակին վրայ դնելով ու ժգնապէս հնչեցուց զայն:

Առաքել Էֆէնտիին անդրդուելի կամք մը ունեցող մարդու մը պէս տեղէն շարժում մը անգամ չըրաւ: Իսկոյն երկու պահակներ ներս մտան ու զողողալով բարեւի կեցան:

— Կապեցէք սա շունին ձեռքերը... չո՛ւտ ըրէք... հրամայեց Վալի փաշան մոռնալով:

Պահակները մէկ ակնթարթի մէջ չուսնով կապեցին Առաքել Էֆէնտիին ձեռքերը: Թշուառ մարդը

ընաւ դիմադրութիւն մը չըրաւ:

— Գետին... դետին պառկեցուցէ՛ք զինքը, կըրկնեց Վալին այնպիսի վրէժնալիցութեամբ մը լեցուած որ կարծես թէ ձեռքովը պիտի ուզէր խղլել զինքը:

Պահակներէն մին ոտքը քաշեց, իսկ միւսը՝ ջանաց ձեռքը բռնել: Այդ կերպով տախտակաման վրայ պառկեցուցին Առաքել Էֆէնտիին ու երեքն ալ քովը կիցան:

Գետն՝ ճպրտաւ բեր, դայնեց Վալին:

Պահակին մէկը գուրս վաղեց ու քիչ յետոյ երկու մատի հաստութեամբ ու ոտներով լեցուած ճպրտ մը բերար:

— Մերկացուցէ՛ք սա շունին ոտքերը, պոռաց Վալին:

— Ոտքերն ալ մերկացուցին երկու պահակները: Ան ատեն սկսաւ հարուած հարուածի ետեւէ իջեցնել Առաքել Էֆէնտիին մերկ ոտքերուն վրայ:

Հինգ... տասը... քսանը... մինչեւ որ կապոյտ ու սև ջուր մը միսերուն մեջէն դուրս տուաւ ու կաշին ծածկեց, մինչեւ որ անդայ դիակի մը պէս փռուեցաւ ան փափուկ դորդերուն վրայ...:

— Օ՛խ, շուն քեզի... առ պատիժ... Վալի փաշան իր ձեռքին ճպրտը մէկդի նետեց:

Յետոյ անարգական նայուածք մըն ալ սեւեռեց քաշկռտուած դոնին վրայ ու դահլճէն հեռացաւ...:

Երկու պահակները կեցած էին ու անխօսուկ կերպով մը կը նայէին:

Ամբողջ ժամ մը անցաւ:

Առաքել Էֆէնտիին անշարժ էր, անզգայ էր... կարծես թէ մեռած էր:

Վերջապէս գերազոյն ձիւ մը ըրաւ Առաքել Է-

ֆէնտիին ու ոտքերը կծկելու ջանաց ու չկրցաւ:

— Վա՛յ, ծօ մեռած չէ՛, տեսա՞ր... մրմնջեց պահակներէն մին:

— Հարկա՛ւ... ատանկ մէկ երկու ճպրտով մարդ կը մեռնի, խելացի՛, նկատել տուաւ միւս պահակը: Այս խօսակցութեան միջոցին, Առաքել Էֆէնտիին ճիշդ մը հանեց բերնէն ու հառաչեց:

— Ա՛խ... ա՛խ... կաթիլ մը ջուր տուէ՛ք ինծի... օգնութի՛ւն... օգնութի՛ւն...:

Պահակներէն մին անմիջապէս գաւաթ մը ջուր տուաւ իրեն դուր մէկ ու մպով խմեց:

Այսպէս, կամաց կամաց զգայութիւնը վրան եկաւ, մարմինը շարժելու կարողացաւ ու աչքերը բացաւ:

— Ա՛խ... առ ո՞ր կը գտնուիմ ես, մրմնջեց Առաքել Էֆէնտիին՝ իր ձեռքը գլխուն զարնելով:

Յետոյ նստելու աշխատեցաւ:

Կը դարձ թէ պաղ սարսուռ մը կար իր երակներու մէջ:

Հաղիւ հազ ոտքի ելաւ ու երկու քայլ առնելու յաջողեցաւ. բայց չկրնար զինալ՝ դարձեալ արթնի մը վրայ նստեցաւ:

Սաստիկ տաքութիւն մը իր գլուխը կայրէր, իր սիրտը կնիէր ու իր բովանդակ էութիւնը կը տառապեցունէր:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Տաճատ Մահմուտ բաշանքն ճէ-
նազէսի Պրիւքսէլտէն Բարիզէ
նազ, օլընըյօր, Պրիւքսէլտէքի
թիւրք էլչիսինին աքաշէսի Ուլ-
թան Համիտ նամընա Մահմուտ
բաշանքն վէֆաթընտան տօյալը
Սապահ-էթտին վէ Լուծֆուլաճ
պէլզատէլէրէ պէյանը թէէսիֆ
իթմիշ տիր, Միւթէվէֆանըն
ճէնազէսինին զիյնէթ վէ թանթա-
նա իլէ տէֆն իտիւմէսինի յօւլ-
թան թապսիէ իթմէքտէն մատա-
անըն Սթանպօլա նազլի իլէ էճ.
տատընըն գապրիստանընա տէֆն
օլընմասընը թէքլիֆ իթմիշ, Գէ-
զա Լուծֆ-Ուլաճ վէ Սապահ-
էթտին պէլզէրին Սթանպօլա կիթ-
մէլէրինի Սուլթան Բէճա իտէլէք
էլթաֆը շահանէսինէ նալի օլա-
ճապարընը պիւտրիւմի տիր, Յա-
զաթ իքի պէլզատէլէր բատիշա-
հըն պու թէքլիֆինի Բէտուլէ տէ-
միշլէր քի՝ միւթէվէֆա Բէտէրլէ-
րինին աղզուըն մուհիւ շու տէվ-
րի համիտէտէ նէ հայաթտօ Բ.
քէն վէ նէ նէտէ վէֆաթտան սօն-
րա՝ Սթանպօլա կիթմէլէճէքտիր.
լէր. վէ քէնտիլէրի Բէտէրլէրինին
շու մէնֆի հալինտէ պաշլամըն օլ-
տըղը իշի սէպաթլէ տէվաթ իտէ.
ճէլէրէ:

— Մօնաթըր վէ յիլանիք վի-
լայէթլէրի տախիլինտէ կէօրին-
մէքտէ օլան չէթէլէրի էհէսիլիթ-
սիլ կէօթէթմէք իշին թիւրք
հիւքիւմէթի անլէրի առէթա հայ-
տուտ վէ էլզեա թէսմիէ իթմէք-
տէ վէ թէլէկրաֆ աճէթլէրինէ օ
հօլտա մալիւմաթ նեշը իթտիր-
մէքտէ տիր:

— Սթանպօլտան ալընան խու-
սուսի մէքթուպլարա պինաէն,
Օրմանեան բաթրիքին իւզէրինէ
իքի էլ Բէվալլէր սըզուպ, անը
հարէլէյն Յակըթ խաշիկեան նամ
կէնճ էն տալը Էրզրումլու օլուպ,
թըպպիյէ մէքթէպիւտէն էճաճը
տիրլոմաըն ալտըգտան սօնրա՝ հիւ-
քէլմէթ անըն Արապիստանա կիթ-
մէսինի էմր իթմիշ. Յակըք իտէ
հա Սթանպօլտա վէ հախօտ մէմ-
լէքէթինտէ մէմուրիլէթ ալմազ
իշին պատրիարքըն թէվաթիլիթ-
նէ միւրաճաթ իտէր, Օրմանեան
էրզրում առաջնորդը օլտըղը էնա-
տէ Յակըքըն Բէտէրի իլէ զայլէթ
տօթ իքէն պու տէֆա Յակըքա
մուալլէնէթ իթմէք իսթմէլ վէ
անը Պատրիարքարանտան գօվրի:
Մէրզում կէնճ քաթի ումիտ օլա-
րազ Օրմանեանտան օ հօլտա ին.
թիգամ ալմազ իսթէր:

— Օրմանեանըն իւզէրինէ սուի
գաթթ վուգու պուլմաըն՝ կէօնա
անըն կաթուղիկիքտէն Միւլի Գի-
լիսէյն ալմէթ իթմիշ օլմասընտան
տօլալը ըմըն տէյու թալըն Սթան-
պօլ մուխպիլի հալըյօր:

Էրմէնի միլլէթինէ աթֆ օլընան
շու ֆանաթիլիք քիւլիյէն էսաս-
սըզ օլուպ, թիւրք տաիրէլիին.
տէն գասաթ ույտուընըն պիր իֆ-
թիւրա տըր:

Էրմինի միլլէթի ասըրբարտ-
պէրու տէկիլ միլլէթտալ էրմէնի
կաթուղիքլէրի, իլա սալիլ խըս-
թիւն միլլէթլէրի տալի գարտալ
թէսմիյէ իթմիշ վէ իթմէքտէ
տիր, Միլլէթիլիքտէ էկէր գէրրէ
գատար օ հօլտա թաաաուպ օլսա
իտի, Օրմանեան իլք տէֆա Պատ-
րիարք ինթիլապ օլընմալտը,
քէզա միւթէվէֆա խորէն Նար-Պէյ
Արք-Էպիսկոպոս իֆրաթ տէրէ-
ճէտէ պիւթիւն էրմէնիլէրտէն սէ-
վիլմէքտի:

Միլլէթիլիք նամընա, շու թաա-
սուպլըք իֆթիւրաընա գարըն շէ-
տիտէն բրօթէթ իտէրիլ. վէ
պէլէրիլք քի թալն կալթաթընըն
միւտրիլիթի մուխպիլիին պու-
պապտէ ալտանըն օլտըղընը իթի-
րաֆ իթսին:

ՏԱԼԻԼԻԹԷ

Իքի ֆըրգայա թազսիմ օլըն-
մըն օլան Մաթթանիա գօմիթէսի
պէյնինտէ Եհնիտէն իթիլաֆ (հա-
մաճախիլ իթիլ) հասըլ օլտըղը վէ
իլք պահարտա Մաթթանիա
ըսհանս պաշլամընըն օլտըր-
րէր պուլընաղըր Սօֆիատան պիլ-
տիրիլմիշ իսթտէ, գարարը գաթի
հազընտա Սօֆիատա թէլէմմիւ
օլընմաթ օլան պէօյիլք գօնկրէյէ
միւնհասըր տըր:

Բօլիթիքայա աշինա օլան տա
իլէլէրտէ սէօլլէնտիլինէ կէօրէ,
Մաթթանիա ըսհան գուհէ
րինտէ պու տէֆա Պուլկարիանըն
սէյիլիք սըֆսիլք իլէ գալմաթ
միւթէլիլք օլուպ, հէր հալտէ
գարտալարընա հարտմա գօշմա-
յա մէպուր օլտմաթ, Հէր հոնկր
հիւքիւմէթ օլուր իտէ օլտըն, պէօյ-
լէ տաղրանմաթ իտէ, տէր հալ-
տիլէլէքտիր, քէզա Բէնիս, Հա-
լը հազըրըն շու տէրլէլէրտէ պու-
լընաղըն տիրիլէն Աստրիա տէօվ
լէթինէ տալի պէյան օլընմըն տըր:

Հիւքիւմէթի հազըրէլէ մուխա-
լիֆ օլան բարթի տախիլիէ նա
ղըրը Մ. Լուցկանովա գարըն հա-
լուպ Սթանպօլալըն գաթիլի օ
լան Հալիւնըն տալմաթընտան օւ-
լայը նաղըրը մուխալէլէ իտէյօր
լար, Գէզա շիւքէլի մէքթուպ
լար նէշրի իլէ, Մ. Լուցկանովըն
Բուսիատա սիրիլին պուլընաղը
էստաէ պաղը ճինայէթլէրէ մէտ
խէլի օլտըղընը իսպաթա գալը-
շըյօրլար:

— Խարիճիլէ միւթմէլարը Մ.
Չէրպանովա Չար Իքիճի տէրէ.
ճէտէ պիր իշան իհտա իթմիշ օլ-
տըղընը գօնթ Լաւաթօֆ Բէլթրա,
պուրկտան պա թէլէկըաֆ Սօ-
ֆիայա պիւտրիլի տիր:

— Պուլկար-Բուլմէն սինօրը իւ-
զէրինտէ, Գէօթլէլէլէ հազըն
սինօր մուհաթըլարը պէյնինտէ

ուֆազ պիր միւսատէմէ վուգու
պուլմալ վէ 1—2 քիշի հարէլէն-
միշ:

Յ Ր Ա Ն Ս Ա

Ֆրանսըզ բարլման ազալարընտան
ազալարընտան Մ. Ժօրէս պիր
մէքթուպտէ «Իթթիֆաթ միւսէլ-
լէսէ Ֆրանսըզլարըն շօվինիկինէ
մուգապիլ թէէսիս օլընտը» տէ-
միշ օլմասընա գարըն պաղը մէ-
պուլար գրօթէթ իթտիլէր իտէ-
տէ, Մ. Ժօրէս քէնտի իտէսը-
նը մուհաթալա իշին միւսաթաա-
յա կիրիշուպ տէտի, «տալէթէ
գարըն գուվլէթլէ զալիպ օլմազ
զալէպէ առտ իտէմէմ. (Իրաւուն-
քին զէմ ուծին յաղթուլիւնը
յաղթանակ չիմ համարըն), սուլը
ումուսի հալընը ումուլէն թէրքի
սիւհիլէ միւթէլին օլուր:» Հարպիէ
նաղըրը Մ. Անտը՝ Ժօրէսին
նալթընա ճէվապէն, «Սուլհը
էն էյի իլմին իտէն գուվլէթլի
պիր սաթլը օրտուր տըր. Ֆրան-
սա գուվլէթլի պիր օրտուր մա-
լիք օլտըրը սալէտէ Բուսիանըն
իթթիֆաթընա նալի օլտուր:»

Նաղըրըն շու պէյանաթըն էք
սէրիլիթի տրա իլէ թաօվիպ օլըն-
տը:

ՎԷՆԷՑՈՒԼԼՈ

Իշ ալման զրէհըրը վէնէ.
գուլլանըն Սան-Պարլոս գալէսիլի
իտրա թուլթուպ, խարապ իթտի-
լէր, Մ. Գաթթրօ տէօվլէթլէրին
շարթլարըն գապուլ իթտիքտէն
սօնրա ալման աթիլլըն շու հարէ.
քէթի միւթէլիլէլէսիֆ տըր:

Ամիրալ իմրէրաթօր վալլէլմէ
շու թէլլիկրալի վէրմիշ տիր.
Բա քիւր զըրընըր Յուլիար 17տէ
Սէն-Պարլոս գալէսիլիլէն թօթա թու-
լթուպ կէրի չէթիլմէյէ մէպուր օլ-
տու. մէպուր գալէլէլէլէլալմաթ ի-
շէն Յուլիար 21տէ թօթա թուլթ-
տուրաթ վէնլթա զըրընը իլէ, Սան-
Պարլոս խարապ օլընտը:

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

Միւթէվէֆա Տաճատ Մահմուտ
բաշանքն ճէնազէսինի Սթանպօլա
նազլ իթմէք իշին Սուլթանըն
թէքլիֆինի իքի պէլզատէլէր Բէտտ
իթմիշ օլտըղլարընտան, Բարիլ
օսլալըն էլչիսի անլէրի Ֆրանսըզ
մաթթէմէլինէ տալմալա վէրուպ,
ճէնազէսինի Սթանպօլա նազլիլին
իթտա իթմիշ տիր:

Մահմէլինին գարարը տուհա
պիլիմէյօր:

— Մարք հիւք խարըղըն էլէ
կէլիլիլէլէլէլէն ըսհանս պալգըրը
օլան մէհտինին թարաֆտարարը
պիր իքի գալիլաթա մաղուպ օլ-
մուլար բտը իտէտէ, Ալման Բէյ
քըրըն Ֆրանսէն վէրտիլի սօն մա-
լիւմաթ պինաէն, մէհտի օրտուր
իլէ իլէրի հիւրիւմէլէլէլալիլինտէ
իթմիշ. վէ էկէր պիր տէֆա հիւքիւ-
մէթ օրտուր մաղուպ օլուր
իտէ՝ մէհտինին Ֆէսէ կիրմէսին-
տէն գօրգուլմաթա տըր:

Ֆազաթ տիկէր պիր Բէվալլէթէ
կէօրէ, մէհտի Ֆէստիքի էվուրա-
լըրըն գալմաթա օլտըղըն տու-
լուպ տէմիշ տիր. «Ֆէսէ կիրմա-
կիմտէ պէնիմ պիրինճի վաղիֆէմ
էնէպիլէրին էօմր վէ էնվալիլին
մուհաթալա իթմէք օլաճազ տըր»:

— Մէհտի թարաֆտար օլան
Հիլէնա գապիլէսի սուլթանըն օր-
տուսընտան մաղուպ օլմըն տըր.
պուլար 150 ինսան քէլլէսի, 175
հէսիր վէ Բէյ շօք հայաթանաթ վէ
լէվալիմաթ Ֆիթիւհաթ ալմէթի
նէվտինտէն սուլթանա կէօնտէր-
միշլէր:

— Իրանալը գօլօնէր Հինչ
թարաֆալ մուհաթէպէսինտէ Պօ-
էրէր թարաֆընա կէլմիշ օլմասը
իշին պիլ մուհաթէլէ իտաւա
մահրում օլտը:

ԻՐԱՆԻԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԵՐԸ

Պուրկալի մեր գործակաւարու թիւնը
ստանալն հաճած է Տ. Արտաշէս Հա-
րենց՝ ուստի մեզ պարտք ունեցողները
թող հաճին անոր յանձնել թէ բաժ-
նեղին եւ թէ գրքի ստակ:

— Թիւրքիստի փոխարէն մեզ շօք.
վճարողներուն զրկեցինք այդ խիստ
հետաքրքրալի գրքի առաջին հա-
տորը:

— Տ. Յ. Ս., Սուլիւա. — Ձեր
թերթերը զատ զատ կը զրկուին:
Ղարապ-Ղարապ. — Ձեր յանձնա-
յարած գիրքերը ուր զրկեցինք:

ՎԱՌԻԹԷ ԽՈՒՄԲԸ

ՎԱՌԻԹԷ թատերական խումբը,
որ Պուրկալ կը գտնուէր, Ֆիլիպէ
գացած է այժմ, ուր մեղի տրուած
տեղեկութեան մը համաձայն, ժողո-
վուրդին կողմէ համակարգից րեղու-
նելու թիւն մը գտնուէ:

Ա. Զ. Դ.

Իշ թէ շատ Պուրկարիլինի ու
Ֆրանսէլիի զիտակ պատանի մը հա-
ղիւ 18—19 տարեկան, Եր մալիֆա-
թուրայի վաճառանոցներու մէջ գրա-
գրութեան պաշտօն ալ վարած է,
Պուրկարիլի մէկ վաճառատանը մէջ
պաշտօն կը փնտէ. պատուաւոր
հրաշխաւորութիւն. զիմիլ խմբագրու-
թեանս:

ԿԸ ՓԵՏՈՒԻ

Բնիկ Սամաթիացի, 27—28 տա-
րեկան Գէորգ Ալեանապետան անուսով
Երիտասարդ Պապ Ալիի գէպէն ի
վեր անյայտ եղած է, իր ծեր մայրը
այս ձմեռ եղանակին քաղքէ քաղք
իր գաւազը փնտռելու ելած է: Ուստի
այդ Երիտասարդի մասին տեղեկու-
թիւն ունեցողներէ կը խնդրուի խմբ-
ագրութեան հաղորդել:

ԱՐՄԵՆԻՍ. ԼԻՆԶԻ. — Հ. Ֆ. Բ.
Լիլիլ, պատկերով եւ ինքնակեն-
սագրութեամբ, Գրեց Պ. Տօնապետ-
եան. գրին ճանապարհածախով 3
ֆրանք. զիմիլ աշխատասիրողին՝

117 400թէկն Փօս - Լոնտօն W
7—8

Одговорились Н. Драгулеву
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна